

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի շնորհավորական ուղերձը՝  
Հաղթանակի ու Խաղաղության օրվա առթիվ

Սիրելի՛ հայրենակիցներ, ջերմորեն շնորհավորում եմ մայիսի 9-ի՝ մեզ համար կրկնակի խորհուրդ ունեցող այս հրաշալի օրվա՝ Հաղթանակի ու Խաղաղության օրվա առթիվ:

Մայիսի 9-ը յուրաքանչյուր հայի համար լույ ամսաթիվ չէ, այն լուսավոր ապագայի կերտման խորհրդանիշ է:

Իսկապես, Հայրենական Մեծ պատերազմում և Արցախյան պատերազմում մեր նախնիների տարած հաղթանակները խորհրդանշական են մեր երկրի համար: Այդ հաղթանակներն են, որ ուժ ու իմաստնություն են փոխանցել, ոգևորել ու առաջ մղել հայ ժողովրդին, սովորեցրել բռունցքվել ու համախմբվել՝ պաշտպանելով հողն հայրենի:

Մեր խոնարհումը բոլոր հերոսների հիշատակի առջև, ովքեր ընկել են հանուն հայրենիքի պաշտպանության:

Մեր հերոսների սխրանքների շնորհիվ ձեռք բերված հաղթանակները թող զորավիգ լինեն մեզ՝ մեր խաղաղ ու հուսալի վաղվա օրը կերտելու գործում:

Հայը հաղթող տեսակ է, և ես վստահ եմ, որ դեռ բազում հաղթանակներ է տոնելու: